

Կ-312²-21.06.2014-ԳԲ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության (28 նոյեմբերի 2011 թվականի ՀՕ-280-Ն) օրենքի (այսուհետ՝ Օրենք) անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգիրք (28 նոյեմբերի 2011 թվականի ՀՕ-280-Ն)»:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի ամբողջ տեքստում «բնության եւ շրջակա միջավայր» բառերը եւ դրանց հոլովածները փոխարինել «շրջակա միջավայր» բառերով եւ դրանց հոլովածներով:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 7-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.«Ուժը կորցրած ձանաչել հոդվածի 3-րդ մասը»:

2. 6-րդ մասում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառեր փոխարինել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կառավարության կողմից սահմանված դեպքերում շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը՝ այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների ծրագիրը»:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը՝ այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների ծրագիրը»:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում «15 օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 30 օրյա» բառերով:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասում «45 օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 60 օրյա» բառերով:

ՀՈՂՎԱԾ 8. Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Երկրաբանական ուսումնասիրության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ-ից 4-րդ եւ 7-րդ մասերով սահմանված կանոնները»:

ՀՈՂՎԱԾ 9. Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընդերքի տեղամասի ընդլայնման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 40-րդ հոդվածի 2-4-րդ եւ 7-րդ մասերով սահմանված կանոնները:»:

ՀՈՂՎԱԾ 10. Օրենքի 44-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1 մասով.

«2.1 Երկրաբանական ուսումնասիրության ծրագրի փոփոխության համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 40-րդ հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

ՀՈՂՎԱԾ 11. Օրենքը 48-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 48¹ հոդված.

«ՀՈՂՎԱԾ 48¹. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով իրավաբանական անձը լիազոր մարմին է ներկայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Լիազոր մարմինը հայտը ստանալուց հետո 5- օրյա ժամկետում այն ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին: Հայտը ստանալուց հետո՝ մինչեւ 30-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեխնիկական առաջադրանք:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի կազմման համար համապատասխան տեխնիկական առաջադրանք մինչեւ 30-օրյա ժամկետում չտրամադրվելու դեպքում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն, իսկ դիմումատուին շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմում է իր հայեցողությամբ:

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի կազմման համար համապատասխան տեխնիկական առաջադրանքը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնից ստանալուց հետո 5-օրյա ժամկետում լիազոր մարմինը այդ մասին ծանուցում է իրավաբանական անձին:»:

ՀՈՂՎԱԾ 12. Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակության նոր 11-րդ կետով.

«11) Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար սահմանված պետական տուրքի անդորրագիրը:»:

ՀՈՂՎԱԾ 13. Օրենքի 50-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով.

«2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է:»:

ՀՈՂՎԱԾ 14. Օրենքի 51-րդ հոդվածը տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 5-օրյա ժամկետում, լիազոր մարմինը ծանուցում է դիմումատուին դիմումի գրանցման մասին:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված նախագիծը եւ ներկայացնում է սույն օրենքով սահմանված տեխնիկական անվտանգության փորձաքննության:

1) տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը նախագիծը ստանալուց հետո՝ մինչեւ 60-օրյա ժամկետում, տրամադրում է համապատասխան փորձաքննական եզրակացություն օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի վերաբերյալ: Համապատասխան եզրակացություն մինչեւ 60-օրյա ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական, իսկ լիազոր մարմնի իրավասու անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

2) Եթե դիմումատուի ներկայացրած նախագիծը թերի է, ապա տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը նախագիծը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկացնում է լիազոր մարմնին նշելով թերությունները: Լիազոր մարմինը տեղեկությունը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է դիմումատուին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

3) լիազոր մարմինը նախագծի ուղված տարբերակը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում այն ներկայացնում է տեխնիկական անվտանգության փորձաքննության:

3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կից փաստաթղթերով եւ պետական տուրքի անդորրագրով ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

4. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ստանալուց հետո՝ մինչեւ 100-օրյա ժամկետում, տրամադրում է համապատասխան փորձաքննական եզրակացություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ համապատասխան փորձաքննական եզրակացություն մինչեւ 100-օրյա ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական, իսկ լիազոր մարմնի իրավասու անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

6. Եթե դիմումատուի ներկայացրած շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմված է թերի, ապա շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը գնահատման հաշվետվությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում տեղեկացնում է լիազոր մարմնին նշելով թերությունները: Լիազոր մարմինը տեղեկությունը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում այդ մասին ծանուցում է դիմումատուին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

7. Լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության լրամշակված տարբերակը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում այն ներկայացնում է շրջակա

միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Սույն օրենսգրքով սահմանված ժամկետում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական իսկ լիազոր մարմնի իրավասու անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

8. Փորձաքննական դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչև 180-օրյա ժամկետում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

9. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կամ ներկայացված արդյունահանման նախագիծը, ինչպես նաև դիմումատուի ֆինանսական եւ տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

10. Եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միեւնույն տեղամասի կամ ընդերքի այնպիսի տեղամասերի համար, որոնք ունեն ընդհանուր մաս, ապա նախապատվությունը տրվում է արտոնյալ դիմումատուին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ այն անձին, որի դիմումն առաջինն է գրանցվել:

11. Լիազոր մարմինը մերժում է դիմումը, եթե՝

1) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են.

2) դիմումում նշված ընդերքի տեղամասը կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ է.

3) ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոի արդյունահանման իրավունք, գերազանցում է դիմումատուի կողմից օգտակար հանածոի արդյունահանման՝ համառոտ նախագծով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահանջվող տարածքը.

4) օգտակար հանածոի արդյունահանման իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին.

5) սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-5-րդ կետերով նախատեսված հիմքերով դադարեցվել է դիմումատուի՝ նախկինում ունեցած որեւէ ընդերքօգտագործման իրավունք.

6) սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների խախտման դեպքում.

7) ընդերքի տեղամասը գտնվում է օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված տարածքներում:

12. Դիմումի մերժման որոշման մեջ նշվում են մերժման բոլոր հիմքերը:

13. Սույն հոդվածով չսահմանված այլ հիմքերով դիմումի մերժումն արգելվում է:

14. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է»:

ՀՈՂԿԱԾ 15. Օրենքի 52-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂԿԱԾ 16. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5.1 մասով.

«5.1 Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ-ից 4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

ՀՈՂԿԱԾ 17. Օրենքի 56-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված տեղամասի ընդլայնման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ-ից 4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

ՀՈՂԿԱԾ 18. Օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4 Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխության համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ-ից 4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

ՀՈՂԿԱԾ 19. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին » և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

հ / հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Ծանոթություն, կատարված փոփոխությունները
1	2	3	4	5
1	ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Գրիգորյան	Ընդերքի արդյունահանման թույլտվություն տալու գործընթացում տեխնիկական առաջադրանքի տրամադրման պարտադիր գործընթացի արտցոլումը պետք է առաջացնի Ընդերքի մասին օրենսգրքում համապատասխան հոդվածներում փոփոխություններ՝ չխաթարելով մեկ պատուհանի սկզբունքը:	Ընդունվել է	Փաթեթին ավելացել է «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ: